

ԱՄՆ ՄՁԳ Հայաստան,
Սոցիալական պաշտպանության համակարգերի
հզորացման ծրագիր

Մարդկային և ինստիտուցիոնալ մերուժի
զարգացման ծրագիր

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Երևան - օգոստոսի 3, 2007թ.

Կենսաթոշակային կառավարումը Հայաստանում. բիզնես գործընթացների վերանայում

03/08/2007-12:00, ք. Աղվերամ: Այսօր մեկնարկեց կենսաթոշակային կառավարման ոլորտի զարգացման գործընթացների նախագծմանն ուղղված երկօրյա կլոր սեղան-քննարկումը: Դրան մասնակցում են ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի (ՍԱՊՀ) նախագահ պարոն Վազգեն Խաչիկյանը, հիմնադրամի պատասխանատու անձինք, ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից ֆինանսավորվող Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման (ՄԴՀՀ) և Մարդկային և ինստիտուցիոնալ մերուժի զարգացման (ՄԻՆՁ) ծրագրերի մի խումբ փորձագետներ:

Կլոր սեղանի նպատակն է դերակատար հաստատությունների մասնակցային քննարկմամբ վերհանել Հայաստանում կենսաթոշակային կառավարման ոլորտի կարիքները և առաջադրել հնարավոր ուղղություններ՝ խթանելու ոլորտի զարգացումը առաջիկա երեք տարիներին: Միջոցառումը կանդորադառնա *ԱՄՆ ՄՁԳ Հայաստան, ՄԴՀՀ* ծրագրի շրջանակներում փորձագետների կողմից պատրաստված կառավարման փաստաթղթի գնահատմանը և կսահմանի զարգացումների հետագա միտումները:

Երկու օրվա ընթացքում մասնակիցները նաև կնախագծեն գործողությունների հետագա քայլերը այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են բիզնես գործընթացները, կառավարումը և գործառնությունները, տեղեկատվական տեխնոլոգիաները, հաճախորդների սպասարկումը և իրավական դաշտը:

Միջոցառումը ելակետային է ՀՀ ՍԱՊՀ-ի և *ԱՄՆ ՄՁԳ Հայաստան, ՄԴՀՀ* ծրագրի փորձագետների լայնածավալ աշխատանքների համար: ՀՀ ՍԱՊՀ-ի կողմից տեղեկատվության արդյունավետ ինտեգրումը, մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումն ու բարելավված սպասարկումը առավելագույնս կծառայեն հանրության և, մասնավորապես, թոշակառուների կարիքներին:

Միջոցառման երկրորդ օրը՝ օգոստոսի 4-ին, կքննարկվեն տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների զարգացման կառավարման հիմնախնդիրներին վերաբերող հարցեր: Ներկա կլինի ներկայացուցիչ Համաշխարհային բանկից:

Կլոր սեղան-քննարկումը ֆինանսավորվում է ԱՄՆ ՄՁԳ/Հայաստան առաքելության կողմից՝ Մարդկային և ինստիտուցիոնալ մերուժի զարգացման (ՄԻՆՁ) ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է Կրթությանը զարգացման ակադեմիան:

###